Աջակցություն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը (ՀՀ ԱՎԾ)

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	վիճակագրություն
Տևողություն՝	25 ամիս
Իրականացման ժամանակահատված՝	փետրվար 2011 - փետրվար 2013
Բյուջե՝	1 մլն եվրո

Շահառու մարմին՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն

ԵՄ անդամ պետության գործընկեր՝

Առաջատար գործընկեր՝ Դանիայի վիճակագրություն , Դանիա

Կրտսեր գործընկեր՝ Գերմանիայի վիճակագրության դաշնային բյուրո – DESTATIS, Գերմանիա

Ծրագրի նկարագիր

Նպատակ. Աջակցել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը ինստիտուցիոնալ Թվինինգի միջոցով ԵՄ անդամ պետություններից համապատասխան մարմինների հետ նախանշված ոլորտներում Հայաստանի պաշտոնական վիճակագրության որոշ տարրերի ու ոլորտների արդիականացման նպատակով:

Բաղադրիչներ.

Բաղադրիչ I. Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության որակի կառավարման համակարգի հզորացում

Բաղադրիչ II. Կառուցվածքային բիզնես վիճակագրության հաշվետվությունների բեռի նվազեցում

Բաղադրիչ III: ՀՆԱ հաշվարկների ամբողջականություն

Բաղադրիչ IV: Գյուղատնտեսական հաշվառման նախապատրաստման ու մեթոդոլոգիայի մշակում

Բաղադրիչ V: Սպառողական գների ներդաշնակեցված ինդեքսի ներդրում

Բաղադրիչ VI: Տեղեկատվական հասարակության վիճակագրության բարելավում

Ձեռք բերված արդյունքներ.

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները հետևյալն են.

ա)Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության բոլոր առանցքային հավաքածուների համար մետատվյալներն ու որակի չափորոշիչները հավաքված են, համակարգված ու հրապարակված Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության կայք էջում,

բ) Վիճակագրական բիզնես ռեգիստրը բարելավված է, Կառուցվածքային բիզնես վիճակագրության համար հաշվետվությունների բեռը նվազեցվել է 28%-ով,

գ)ՀՆԱ հաշվարկների համար ամբողջական աղյուսակային վարժությունն ավարտված է; օգտագործվել է գերմանական փորձը ՀՆԱ հաշվարկման օրացույցի կրճատման համար,

դ)Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության կարողությունները հզորացվել են՝ հետագայում առաջ շարժվելու ու գյուղատնտեսական հաշվառումն իրականացելու համար; անհրաժեշտ մեթոդոլոգիաները, հրահանգները, տվյալների հասկացությունները, գործիքները մշակվել են, ու կենտրոնական աշխատակազմն ու տարածաշրջաններում տվյալների հարցումներ կատարողները վերապատրաստվել են,

դ)Սպառողական գների ինդեքսը ներդաշնակեցվել է ԵՄ ստանդարտների հետ,

ե)Պիլոտային ՏՀՏ ուսումնասիրությունն իրականացվել է պետական մարմինների շրջանում:

Հավելյալ տեղեկատվություն

http://www.armstat.am/en/?nid=383
http://www.dst.dk/en/consulting/projects/Armenia2011